ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ. ՄԱՍ ԱՌԱՋԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐԸ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՆՈՐ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Գևորգ Խուդինյան

Հոդվածում փորձ է արվում հստակեցնել «ազգային շահեր» և «հայագիտություն» հասկացությունների բովանդակությունը, նրանց փոխներթափանցման օրինաչափ բնույթը: Հիմնավորվում է այն գաղափարը, որ ազգային շահերի մասին պատկերացումները ներկայումս հակասության մեջ են մտել գլոբալացող աշխարհում այդ շահերի ձեռք բերած նոր բովանդակության հետ. ազգային շահերի ավանդական՝ տարածքային-քանակական ընկալմանը զուգահեռ, ներկայումս ավելի ու ավելի է կարևորվում ազգերի մրցունակության արժեքային-որակական արժեչափերի պայքարը: Ստեղծվում է ազգային շահերի ընկալման՝ հորիզոնական և ուղղահայաց դիտանկյունների վրա հիմնված մի նոր՝ վիրտուալ իրականություն: Հայագիտությունը գլոբալացող աշխարհում առկա՝ առաջադիմության սուբյեկտի և օբյեկտի ներդաշնակեցման խնդիրը կարող է լուծել ինքնաճանաչողություն – ինքնակատարելագործում - ինքնադրսևորում շղթայի միջոցով: Ցույց է տրվում ազգային շահերի և հայագիտության նպատակների փոխներթափանցման փաստից բխող՝ «գիտական» և «քաղաքական» եզրահանգումների միակողմանիությունը: Հայագիտությունը դարձել է ազգային շահերի պաշտպանության ոլորտ. ազգային շահերի ու հայագիտության նպատակների փոխներթափանցումը ոչ թե պարզ-քաղաքական նպատակահարմարության արդյունք է, այլ՝ առաջադիմության և մարդու, միաժամանակ՝ առաջադիմության և ազգերի հակաթեզի հաղթահարման օբյեկտիվ պահանջմունքի արտահայտություն:

1. Ազգային շահերը՝ մրցակցային նոր միջավայրում

Ազգի՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող նպատակների ու արժեքների պետության գիտակցված պահանջմունքի վերածվելու գործընթացը, այսինքն՝ ազգային շահերի ձևավորումն ու բյուրեղացումը, վերջին առնվազն երկու դարերի ընթացքում տարբեր, հաճախ խիստ հակասական գնահատականների է արժանացել ինչպես համաշխարհային գիտական ու քաղաքական մտքի, այնպես էլ նրա ազդեցությունը կրող հայ պատմափիլիսոփայական գրականության մեջ: 19-րդ դարից՝ ազգ-պետությունների ձևավորման դարաշրջանից սկսած, սկզբում՝ Եվրոպայում, իսկ այնուհետև նաև ողջ աշխարհում «ազգային շահեր» հասկացությունը աստիճա-

նաբար դարձել է պետության միջոցով ազգի մնայուն արժեքների ու նպատակների ընկալումը՝ որպես գիտակցված պահանջմունք:

Ազգի և պետության շահերի միաձուլման ճանապարհին դեռևս պահպանվող ներքին հակասությունները, որոնք արձանագրվում են ողջ աշխարհում, մեզանում պատմական զարգացման տարբեր շրջափուլերի արագընթաց հաղթահարման պատճառով սառեցվել (կոնսերվացվել) են ու ձեռք բերել տարբեր դարաշրջանների ծնունդ հանդիսացող կարծրացած մտակաղապարների զուգահեռ գոյակցության փաստի տեսք:

Մինչդեռ, ինչպես համաշխարհային գիտական ու քաղաքական մտքի մեջ, այնպես էլ մեր ընկալումներում, «ազգային շահեր» հասկացության հանդեպ միշտ էլ պահպանվող մոտեցումների բազմազանությունն իր խորքում պայմանավորված է ոչ միայն «իրերի փաստացի վիճակով», այլև՝ Բենեդիկտ Անդերսոնի կողմից «ազգ» և «ազգայնականություն» հասկացությունների մասին վերջերս արձանագրված այն ֆենոմենով, որը նա անվանում է «միմյանց մեջքով կանգնելու» իրողություն: Նա գտնում է, որ «...ինչպես էլ սիստեմավորվեն ազգայնականությունը «քարտեզագրելու» փորձերը, նմանօրինակ անթոլոգիաների հեղինակները սովորաբար դառնում են մեկը մյուսի հանդեպ մեջքով կանգնած՝ տարբեր անորոշ հորիզոններին նայողներ և ոչ թե՝ կազմակերպված, համախմբված պայքարում միավորվողներ» [1]: Նման երևույթը, որը պայմանավորված է «ազգ» և «ազգայնականություն» հասկացությունները աշխարհայացքային, քաղաքական, հոգեբանական և այլ հիմքերի վրա ձևավորված տարբեր դիտանկյուններով քննելու իրողությամբ, իր գոյության մասին հիշեցնում է նաև «ազգային շահեր» հասկացության բովանդակությունը հստակեցնելու փորձերի ժամանակ: Սակայն դիտանկյունների նման բազմազանությունը ամենևին էլ չի նշանակում, որ «ազգային շահեր» հասկացությունը բանականորեն ընկալելու հնարավորություն մենք չունենք: Ավելին, ազգ-պետությունների ձևավորման դարաշրջանից սկսած՝ «ազգային շահեր» ասելով հասկանում են հենց պետության «...գիտակցված պահանջմունքները, որոնք որոշվում են տվյալ դարաշրջանում պետության տնտեսական և աշխարհաքաղաքական հարաբերություններով, պատմամշակութային ավանդույթներով, անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ, բնակչությանն արտաքին սպառնալիքից և ներքին անկարգություններից, բնապահպանական աղետներից և այլն, պաշտպանությամբ» [2]: Անշուշտ, այս բանաձևը մեզանում անմիջապես կարող է վիճարկվել՝ առարկելով, որ նրանում «ազգ» եզրույթն ընկալվում է որպես տվյալ պետության «քաղաքացիների» ամբողջություն: Հայտնի է նաև, որ պետու-

թյունն ինքը միշտ չէ, որ արտահայտում է ազգային շահերը՝ անգամ դասական ազգ-պետությունների շրջագծում: Կարող են բերվել նաև հակառակ փաստարկներ՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ արևմտյան՝ քաղաքացիական հասարակության սուբյեկտը հենց քաղաքացին է և ոչ թե այս կամ այն ազգի ներկայացուցիչը, իսկ մեզանում նման ընկալումը դեռևս չի վերածվել «գիտակցված պահանջմունքի»: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ կենտրոնանալով այս բազային մոդելի ներքին հակասությունների, ինչպես նաև մեր իրականության հետ անհամապատասխանության փաստի վրա, մենք կարող ենք մոռացության տալ այն իրողությունները, որ ա. տվյալ ընկալումը ևս ներկայումս աստիճանաբար միակողմանի ու թերի է դառնում հենց իր՝ արևմտյան հասարակության համար, բ. այդ բազային մոդելի ներսում առկա հակասությունները մի բան են, մեր դիտանկյունից՝ դրանք գնահատելու պարագայում առաջ եկող ակնհայտ և սուր բախումները (կոլիզիաները)՝ մեկ այլ բան: Ուրեմն, խնդիրն այն է, որպեսզի ազգային շահերի մեր ընկալումը համապատասխանեցնենք՝ ա. ոչ թե նման բազային մոդելի, այլ՝ ողջ աշխարհում առկա իրերի փաստացի դրության հետ, բ. նկատի առնենք Բ.Անդերսոնի մատնանշած՝ մեկս մյուսին մեջքով կանգնելու իրողությունը և ըստ այդմ հստակորեն տարանջատենք տվյալ իրականության զույգ ընկալումները:

Հիմք ընդունելով իրերի փաստացի դրությունը՝ կարող ենք եզրակացնել, որ ժամանակակից աշխարհում պետությունների գերիշխանության (սուվերենության) գաղափարի վրա հիմնված ազգային շահերի տարածքային-աշխարհաքաղաքական ընկալումը սկսել է փոխարինվել նավահանգստի (պետության) և նավի (ազգ-արժեքի) միջև առկա ավելի բարդ հարաբերությունների մի համակարգով՝ առաջ բերելով նույն եզրույթի գնահատման երկու՝ հորիզոնական և ուղղահայաց դիտանկյուններ: Դրանցից առաջինը՝ <u>հորիզոնականը</u>, ներառում է ազգային շահերի ընկալումը՝ պետության գիտակցված պահանջմունքների տարածքային-աշխարհաքաղաքական հարթության վրա, իսկ երկրորդը՝ <u>ուղղահայացը</u>, հիմնվում է ոչ թե պետության, այլ՝ «ազգ-արժեք» նոր հասկացության ուժի ու ձգողականության՝ ուղղահայաց աղյուսակի վրա: Այս երկու դիտանկյունների «միավորող գաղափարը» նավահանգստի (պետության) և նավի (ազգ-արժեքի) սինխրոն փոխգործակցության մոդելն է, որը ցույց է տալիս ընդամենը մի բան. ազգը, որը ազգ-պետությունների տարածքային ընկալման շրջագծում իր շահերի իմաստավորման խնդիրը գրեթե ամբողջովին փոխանցել էր պետությանը, ներկայումս հաշվի առնելով հանդերձ նավահանգստի (այսինքն՝ պետության) մնայուն շահերը, միաժամանակ, ոչ թե

ի հեճուկս, այլ՝ հանուն այդ շահերի իրացման՝ դուրս է գալիս նավահանգստից և գլոբալ մրցասպարեզում՝ օվկիանոսում հետապնդում է այդ մնայուն շահերի իրացումը՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, գիտական և այլ ոլորտներում՝ առաջ բերելով «ազգ-արժեքների» պայքարի վիրտուալ մրցադաշտ: Նման պայմաններում մրցակցությունը վերածվում է մի կողմից՝ որոշակի տարածքների պաշտպանության, ընդարձակման կամ վերահսկողության, իսկ մյուս կողմից՝ տարբեր մրցադաշտերի գլոբալ խճանկարի մեջ որոշակի արժեքների գերակայության համար ընթացող պայքարի:

Հարց է առաջանում՝ որքանո՞վ են համապատասխանում ազգային շահերի մասին մեզանում ցայսօր առկա հաճախ անորոշ, հաճախ էլ՝ խիստ կերպով խճճված պատկերացումները նման նոր իրողություններին և նրանցում գործելու սեփական հնարավորություններին: Պատասխանը կարող է ավելի քան շշմեցուցիչ լինել՝ ազգային շահերի մասին մեր պատկերացումները ոչ միայն կապ չունեն նոր իրողությունների, այլև՝ նրանցում գործելու՝ ՀՀ պետության և հայ ժողովրդի ռեալ հնարավորությունների հետ: Սակայն, միաժամանակ, ներկայումս առկա նոր իրողություններն ու մեր հնարավորությունները ոչ միայն չեն հակասում միմյանց, այլև ընդհակառակը՝ գնալով ավելի ու ավելի են մոտենում ու նմանվում իրար: Արդյունքում՝ մենք ունենք գիտակցված պահանջմունքների՝ շահերի և չգիտակցված հնարավորությունների, այսինքն՝ նոր իրողությունների սարսափելի անհամապատասխանություն: Պատճառն ակնհայտ է. մրցակցային այն նոր միջավայրը, ուր ազգային շահերը կառուցվածքային առումով դրսևորվում են ոչ միայն հորիզոնական-տարածքային, այլև ուղղահայաց-արժեքային հարթությունների վրա, և առաջին պլան է դուրս գալիս ազգի մտավոր-ինտելեկտուալ ներուժի իրացման խնդիրը, կարծես հենց ստեղծված է ինքնատիպ քաղաքակրթություն ու նրանից բխող՝ մտավոր ներուժ ունեցող, սփյուռք ունեցող (դիասպորալ) ազգերի համար, որոնք, միաժամանակ, ունեն նաև իրենց հնարավորությունների ու ներուժի կենտրոնացման վայր՝ պետություն կամ՝ մեր բնորոշմամբ՝ նավահանգիստ: Ակնհայտ է նաև, որ ազգային շահերի, այսինքն՝ գիտակցված պահանջմունքների մեր ընկալումը չի հասել անգամ վերը նշված այն դասական բնորդին, որը բնորոշ է դեռևս 19-րդ դարում ձևավորված եվրոպական ազգ-պետություններին և որն արդեն իսկ քայքայվում է՝ գլոբալացման հետևանքով ազգի ու պետության «նոր ապահարզանի» արդյունքում: Այսինքն՝ վերջին առնվազն երկու դարերի ընթացքում, ազգային շահերի մեր ընկալումը, անցնելով ընդամենը զարգացման երկու շրջափու-

լերի միջով՝ կանգ է առել երրորդի առջև, մինչդեռ ողջ քաղաքակիրթ մարդկության պատկերացումները գտնվում են տվյալ սանդղակի ոչ թե երրորդ, այլ՝ չորրորդ նշաձողի վրա: Այդ սանդղակը շատ պարզ է ու հստակ.

I. միջնադարյան կրոնամիստիկական ընկալումներ, որոնք պետության բացակայության պատճառով մեզանում, ընդհուպ մինչև 19-րդ դարի կեսերը, հանդես են եկել որպես Հայաստանյայց եկեղեցու կողմից ղեկավարվող կրոնական համայնքի շահեր՝ իրենց ազգ = եկեղեցի բանաձևով,

II. պետական անկախության ձեռքբերման և տարածքների ամբողջացման խնդիր ունեցող ազգի քաղաքական շահեր՝ ազգ + հայրենիք = պետություն բանաձևով, որոնք որպես գիտակցված պահանջմունքներ ձևավորվել են 19-րդ դարի երկրորդ կեսին, իսկ անկախության ձեռքբերումից հետո օրինաչափորեն երկփեղկվել են՝ որպես <u>պետության</u> գիտակցված պահանջմունքներ և նրանց հետ դեռևս չմիաձուլված՝ <u>ազգի</u> չիրացված հնարավորություններ (Հայ դատ),

III. ազգային շահերի դասական-եվրոպական ընկալումը, որպես ազգի նպատակները հետապնդող ու արժեքները պաշտպանող պետության գիտակցված պահանջմունքների հանրագումար, ուր առնվազն արտաքին աշխարհում՝ «ազգ» հասկացությունը ընկալվում է որպես տվյալ պետության քաղաքացիների ամբողջություն:

IV. գլոբալացող աշխարհում անխուսափելի դարձող՝ պետության ու ազգի «նոր ապահարզանի» հիման վրա՝ պետության գիտակցված պահանջմունքների իրացման հորիզոնական՝ աշխարհաքաղաքական և ուղղահայաց՝ արժեքային ընկալումների նոր տարանջատման մոդելի ձևավորում, որի շրջագծում ազգային շահերը ձեռք են բերում նավահանգստի (պետության) և նավի (ազգի) որակապես նոր փոխհարաբերությունների տեսք:

Հարց է առաջանում՝ նմա՞ն են արդյոք այս սանդղակների II և IV հորիզոնականներն իրար: Ակնհայտ է, որ կառուցվածքային առումով դրանք շատ մոտ են իրար, իսկ բովանդակային առումով՝ ոչ: Եզրակացությունը պարզ է. ազգային շահերի ընկալման, այսինքն՝ դրանք գիտակցված պահանջմունքի վերածելու անկարողության պատճառով, չենք նկատում, որ ներկայումս ազգային շահերի իմաստավորման IV սանդղակի վրա կանգնած աշխարհը շարժվում է ուղիղ մեզ վրա: Ուրեմն, կառուցվածքային առումով մենք լուծելու որևէ խնդիր չունենք, քանզի հայտնվել ենք «Երբ Մուհամմեդը չի գնում սարի մոտ, սարն է գնում Մուհամմեդի մոտ» առածի գլխավոր հերոսի վիճակում: Խնդիրն այնպիսի լուծումներ գտնելու մեջ

է, որպեսզի գլոբալացող աշխարհում ինքնաբերաբար գլոբալացող՝ ազգային շահերի նոր կառուցվածքը որպես հորիզոնական և ուղղահայաց դիտանկյունների հանրագումար ընկալվի նաև մե՛ր կողմից՝ բովանդակային առումով: Մինչդեռ ստացվում է, որ մենք արդեն «ֆիքսվել ենք» գլոբալ ռազմավարությունների համատեքստում՝ որպես մրցակցային նոր միջավայրին համապատասխանող և անհրաժեշտ գործոն, սակայն մենք ինքներս մեզ չենք գիտակցում որպես այդպիսին, այսինքն՝ մեր գիտակցությունը հետ է ընկնում ոչ միայն աշխարհի, այլև՝ սեփական կեցությունից: Նման «արագընթաց վերաիմաստավորումը» հնարավոր է միայն այն պարագայում, եթե հիմք ընդունելով ազգային շահերի ընկալման այն մոդելը, որն առկա է ժամանակակից աշխարհում (վերոբերյալ սանդղակի չորրորդ նշաձողը) և մեր ներկա պետական ու միաժամանակ նաև՝ ազգային կեցության առանձնահատկությունները, ազգային շահերի մասին մեր նախորդ բոլոր պատկերացումները վերադասավորենք իբրև ազգային-քաղաքական առաջնահերթությունների սանդղակ, որի իրականացման գործընթացի որոշակի հանգրվանում կհանգենք ազգային շահերի ամբողջական ու ինչ-որ չափով՝ նաև միասնական ընկալման: Ընդ որում, որքան էլ բարդ ու բազմաբնույթ լինեն այդ առաջնահերթությունները, պետության, և նրա միջոցով՝ հայրենիքի անվտանգության ապահովումը բացարձակ արժեք է այդ պատկերացումների ողջ խճճված համակարգում: Ուրեմն, հենց դա է այն առանցքը, որի շուրջ միայն հնարավոր է ձևավորել ազգային շահերի նոր հավասարակշռությունը (բալանսը)՝ ըստ նրանց սուբյեկտների և դրսևորման որոշակի ոլորտների: Ընդ որում, ի տարբերություն ազգային շահերի սուբյեկտների, ազգային շահերի դրսևորման որոշակի ոլորտների հանդեպ անխուսափելի է միաժամանակ երկու դիտանկյունների զուգահեռ գոյությունը:

Այսպիսով, ինքնաբերաբար առաջ է գալիս հետևյալ սխեման. Ազգային շահերի սուբյեկտները՝ ՀՀ քաղաքացիները, հայրենաբնակ հայությունը (Արցախ, Ջավախք և այլն) և հայկական համայնքները հավասարակշռում են իրենց շահերը՝ պետության (նավահանգստի) հանդեպ սեփական պարտականություններից բխող իրավունքների ուղղահայաց սանդղակի հիման վրա: Տվյալ հավասարակշռությունը, իր հերթին, որպես գիտակցված շահերի ամբողջություն, բեկվում է միաժամանակ երկու՝ հորիզոնական և ուղղահայաց դիտանկյունների մեջ: Հորիզոնական դիտանկյունն այն «ֆիլտրն» է, որն ապահովում է ազգային անվտանգության, այսինքն՝ հայրենիքի (պետություն+հայրենաբնակ հայություն) գոյատև-

ման խնդրի գերակայությունը, իսկ երկրորդ՝ ուղղահայաց դիտանկյունը, ազգային շահերի արժեքային ընկալման այն լայն ոսպնյակն է, որի միջով անցնող տվյալ բացարձակ գերակայությունը դառնում է ազգային շահերի դրսևորման որոշակի ոլորտների և նրանց համամասնությունների ապահովման օպտիմալ տարբերակ: Առաջարկվող սխեման բերվում է նկարում:



Այսպիսով, ժամանակակից աշխարհում, մեր ազգային շահերը ՀՀ քաղաքացիների, հայրենաբնակ հայության և հայկական համայնքների շահերի հավասարակշռված հանրագումարն է, որի ձևավորման միջոցով լուծվում են գիտակցված պահանջմունքների վերածված ազգային նպատակների հետապնդման և արժեքների պաշտպանության խնդիրները՝

մրցակցային նոր միջավայրին բնորոշ՝ հորիզոնական և ուղղահայաց գործելաոաշտերում:

Առաջին հարթության վրա առկա խնդիրների ողջ համալիրը կարգավորվում է ազգային անվտանգության համադրույթի, իսկ երկրորդ հարթության խնդիրների համալիրը՝ ողջ աշխարհում հայկական գործոնի մրցունակության ապահովման քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլ արժեչափերի ամրապնդման ու զարգացման միջոցով: Ընդ որում՝ և՛ առաջին, և՛ երկրորդ հարթություններում առկա խնդիրները տարանջատվում են միևնույն՝ քաղաքական, տնտեսական, հոգևոր, մշակութային, գիտական և այլ ոլորտների: Նման տարանջատումը առաջ է բերում ազգային շահերի պաշտպանության որոշակի ոլորտներին զուգահեռաբար երկու տարբեր կողմերից մոտենալու անհրաժեշտություն: Սակայն, միաժամանակ, երկու տարբեր դիտանկյունների՝ հորիզոնական-տարածքային-քանակական և ուղղահայաց – արժեքային - որակական առկայությունը չպետք է հանգեցնի ազգային շահերի ապահովման որևէ որոշակի ոլորտի՝ որպես մեկ ամբողջության տարանջատմանը: Իսկ սա նշանակում է, որ նման դիտանկյուններն անհրաժեշտ են մեր գիտակցված պահանջմունքների մի կողմից՝ շարունակականության ապահովումը և, մյուս կողմից՝ որակական չափորոշիչների մեծացումը հավասարակշռելու, այսինքն՝ գոյատևման ու զարգացման խնդիրների համաժամանակյա լուծման համար:

2. Հայագիտությունը որպես ազգային շահերի պաշտպանության ոլորտ

Ազգային շահերի, այսինքն՝ գիտակցված պահանջմունքների վերածված ազգային նպատակների և արժեքների պաշտպանության խնդիրը, լինելով մեկ ամբողջություն, միաժամանակ տարանջատվում է առանձին ոլորտների, որոնցից յուրաքանչյուրում այդ նպատակներն ու արժեքները «կերպավորվում» են ըստ մարդկային գործունեության բնագավառների՝ քաղաքականություն, տնտեսություն, մշակույթ և այլն: Դրանցից յուրաքանչյուրում՝ ազգային շահերի պաշտպանությունը ներառում է որոշակի խնդիրների մի քանի խմբեր: Դրանք են.

ա. ինքնապահպանումը՝ որպես տեսակ և հավաքականություն,

բ. ինքնավերարտադրությունը կամ ինքնակատարելագործումը՝ երկու հակադիր շարժումների միջոցով՝ մոտենալով սեփական էությանը և հարստացնելով այն,

գ. ինքնադրսևորումը, արտաքին միջավայրում՝ մրցակիցների ազդեցության սահմանափակման և, միաժամանակ, սեփական արժեհամակարգով մարդկությանը հարստացնելու գործողությունների տեսքով:

Սա նշանակում է, որ ազգային շահերի դրսևորման ոլորտներից յուրաքանչյուրը պարտադիր կերպով ներառում է առնվազն երեք խնդիր՝ դրանց ավելացնելով իր յուրահատուկ առաջադրանքները: Մասնավորապես, նման յուրահատկությամբ օժտված են այն ոլորտները, որոնք կապ ունեն ինքնապահպանման, ինքնավերարտադրության և ինքնադրսևորման հիմքը կազմող՝ ինքնաճանաչողության խնդրի հետ:

Հարց է առաջանում՝ արդյո՞ք ճանաչողությունը որպես ճշմարտության փնտրտուք և ազգային շահերը՝ որպես աշխարհում սեփական ճշմարտության (նպատակների ու արժեքների) հաստատման գիտակցված պահանջմունք, չե՞ն հակասում միմյանց: Ի վերջո, եթե նրանք հակասության մեջ են մեկը մյուսի հետ (ինչպես կարծում են ոմանք), ապա գիտությունը որպես մրցակցային նոր միջավայրում ազգային շահերի պաշտպանության ոլորտ, պետք է սահմանափակվի միայն ու միայն տնտեսության կցորդի, այսինքն՝ հիմնականում որակական ռեսուրսների ձևավորման գործընթացի սպասարկուի իր դերով, որը ժամանակակից աշխարհում ազգի մրցունակության ապահովման կարևոր պայմանն է: Սակայն տեխնիկական ու ճշգրիտ գիտությունների առջև կանգնած այս խնդրի միակողմանի լուծումը կարող է հանգեցնել նրան, որ անտեսելով հումանիտար գիտությունները՝ մարդ-բանական էակը ինքնաբերաբար կդադարի զգալ իր՝ որպես տեսակի կարիքը: Նա կդառնա համամարդկային առաջադիմության թափանիվի մի պտուտակ, որը, մաշվելով, դուրս կնետվի այդ մեխանիզմից, եթե, դրան զուգահեռ, չկարողանա ինքնաճանաչողության միջոցով կատարելագործել ինքն իրեն և՛ որպես անհատ, և՛ որպես որոշակի ազգի ներկայացուցիչ[1]: Փորձը ցուց է տալիս, որ նման աննպատակ «մաշումը» հանգեցնում է նրան, որ ճանաչողության ողջ մեքենան դառնում է ավելի պարզունակ, ուրեմն՝ ավելի թույլ, այսինքն՝ մարդկությունն աղքատանում է՝ իր ներուժը սնող աղբյուրների բազմազանության կորստի հետևանքով: Ուրեմն, սեփական էության գիտական ճանաչողությունը և այդ ճանապարհով ձեռք բերվող արդյունք-

[1] Նման երևույթ է այսօր արձանագրվում վերջին տարիներին արտասահման անցած մեր շատ գիտնականների մոտ, որոնք, ձեռք բերելով փող ու առաջխաղացման (կարիերայի) հնարավորություններ, կտրվում են իրենց արմատներից, ուստիև զրկվում գիտության մեջ մաքառելու կարևոր խթանիչից՝ նրա արդյունքները սեփական ազգին ծառայեցնելու ձգտումից:

ները՝ որպես գիտելիքների հանրագումար, հարկավոր են և՛ սեփական ազգի առաջադիմության, և՛ համամարդկային առաջադիմության համար: Ճանաչողությունը որպես համամարդկային առաջադիմության միջոց, ինչպես անցյալում, այնպես էլ այսօր մերժում է առաջադիմության ուղղագիծ-քանակական՝ սպենսերյան ընկալումը: Գործում և իրեն ավելի ու ավելի է զգալ տալիս Հերբերտ Սպենսերի բանաձևած առաջադիմության օրգանական տեսությանը ժամանակին լուրջ հարված հասցրած ռուս ինքնատիպ մտածող Նիկոլայ Միխայլովսկու հայտնաբերած օրինաչափությունը՝ առաջադիմության հակասականության սկզբունքը: Նիկոլայ Միխայլովսկին գտնում էր, որ անցումը միատարրությունից դեպի բազմազանությունը հանգեցնում է մի կողմից՝ հասարակության զարգացմանը, մյուս կողմից՝ նրա առանձին միավորի՝ մարդ-անհատի պարզունակացմանն ու արժեզրկմանը (դեգրադացիային): «Առաջադիմությունը՝ դա աստիճանական մոտեցումն է անբաժանելիների ամբողջականությանը...»,- եզրակացնում էր նա [3, c. 150]:

Համամոլորակային առումով նման ամբողջականության ձեռքբերման խնդիրն այսօր հանգում է նրա զույգ անբաժանելիների՝ մարդ-անհատի և ազգերի ինքնատիպ բազմազանության գաղափարի աստիճանական, բայց միաժամանակ՝ հետևողական վերակերպավորմանը՝ քաղաքական և բարոյական առաջադրանքից դեպի գիտականորեն հաստատված օրինաչափության հարթություն: Պատճառն ակնհայտ է. անհատ-հասարակություն հակաթեզը և նրա վրա հիմնված՝ պայքարն անհատականության համար դեռևս չի հաղթահարում համամոլորակային առումով առաջ եկող խզումը՝ առաջադիմության սուբյեկտի և օբյեկտի միջև: Անհատականությունը, զրկվելով ազգային դիմագծից, աստիճանաբար զրկվում է նաև իր գործողությունների գաղափարական ու բարոյական խթաններից (մոտիվացիաներից), այսինքն՝ միջանկյալ օղակի՝ ազգային Ես-ի համահարթեցումը հանգեցնում է աղետալի հետևանքների՝ համամարդկային առաջադիմության համար առաջ բերելով հիրավի «բումերանգի էֆեկտ»: Սրանից ծնունդ է առնում հաջորդ հարցը՝ իսկ ո՞րն է նման սուբյեկտի՝ ազգի ինքնաճանաչողության նպատակը՝ ճշմարտության հայտնաբերո՞ւմը, թե՞ արդարության սեփական բանաձևի հիմնավորումը:

Հարցի պատասխանը գտնելու համար, խնդիրը պետք է դիտարկել միաժամանակ մի քանի հարթությունների վրա.

ա. փիլիսոփայական-աշխարհայացքային,

բ. գիտաճանաչողական,

գ. գործնական-քաղաքական:

Առաջին հարթության վրա խնդիրը վաղուց լուծված է նույն Ն.Միխայլովսկու և այլ սոցիոլոգների կողմից (հիշենք թեկուզ վերջինիս պրավդա-ճշմարտություն և պրավդա-արդարություն հասկացությունների անխզելի միասնության տեսությունը [3, c. V]: Երկրորդ հարթության վրա՝ ինքնաճանաչողությունը, այսինքն՝ սեփական արժեհամակարգի բացահայտման խնդիրը, ազգային շահերի հետապնդման վճռորոշ պայման է, քանի որ առանց դրա հնարավոր չէ պատկերացնել ինքնակատարելագործման ճշգրիտ դեղատոմսերի մշակումը: Ուրեմն, փնտրելով «գիտելիք՝ իր համար», հնարավոր չէ անգամ խորհել ճշմարտությունը շրջանցելու մասին, որը նույնն է թե սխալ դեղատոմսից օգտվելը: Մնում է երրորդ՝ գործնական-քաղաքական հարթությունը, որպես երկրորդ հարթության վրա արդեն իսկ ձեռք բերված գիտելիքների օգտագործման ձևերի ու եղանակների ընտրություն: Կրկնում ենք՝ խոսքը ձեռք բերված գիտելիքների ճշմարտության մասին չէ, այլ՝ նրանց օգտագործման ձևերի: Սակայն, այս առումով ևս, ճշգրիտ ինքնաճանաչողությունը և ազգային շահերի պաշտպանությունը չեն հակասում միմյանց: Օրինակ, երբ կեղծվում է պատմության այս կամ այն դրվագը՝ տվյալ ժողովրդի ազգային շահերը ոտնահարելու համար, ապա նրան հակադիր, բայց գիտականորեն նույնպես միակողմանի հայեցակարգի ստեղծումը, հակակշռելով նման փորձը, մրցակցային միջավայրում ստեղծում է անհրաժեշտ հավասարակշռություն, որը ճշմարտության հաստատման նախապայմանն է: Ուստի, նման պայմաններում առնվազն փարիսեցիություն կլիներ պահանջել տվյալ գիտնականից ճշմարտության չափաբաժնի կամ «դոզայի» նվազեցում, քանզի արդյունքում մրցակցային միջավայրում կձևավորվեր այնպիսի հավասարակշռություն, որն ավելի մոտ է կեղծիքի, քան ճշմարտության[2]:

Այսպիսով, ինքնաճանաչողության խնդրի գիտական լուծումների միասնական համակարգի՝ հայագիտական համակարգի ձևավորումը ազգային շահերի պաշտպանության պարտադիր պայմանն է, միաժամանակ նաև՝ գիտական ճշմարտության որոնման այն բնագավառը, որի միջոցով պահպանվող ու հարստացվող ազգի քաղաքակրթական ներուժը դառնում է համամարդկային առաջադիմության ազդակներից մեկը:

Նման ազգային ու համամարդկային նպատակների իրականացումը մրցակցային նոր միջավայրում ստեղծում է ազգային շահերի ու մեր ինք-

[2] Ավելին, գործնական-քաղաքական գետնի վրա արդեն իսկ ձեռք բերված գիտելիքների օգտագործման ոլորտների ու չափի կարգավորումը վաղուց արդեն դարձել է պետության կայացած լինելու չափորոշիչներից մեկը: Նման մեխանիզմի գործնական կիրառումը՝ հայագիտության մեջ ևս հնարավոր է: Այդ մասին կխոսենք հետազոտության երկրորդ բաժնում:

նաճանաչողության խնդիրը լուծող՝ հայագիտության ներդաշնակ հավասարակշռությունը՝ որպես ամբողջի (ազգային շահեր) և մասի (հայագիտություն) փոխադարձ կապ[3]: Այդ շահերի հետապնդման զույգ՝ հորիզոնական և ուղղահայաց դիտանկյուններից յուրաքանչյուրում հայագիտությունն ունի իր նպատակները, որոնք իրենց գործնական հետապնդման՝ իրականանալիության գործընթացում կազմում են հայագիտության գործառույթները՝ ազգային շահերի պաշտպանության համատեքստում:

Առաջին՝ հորիզոնական դիտանկյունի պրիզմայով նրանք հանդես են գալիս որպես պետության և ազգի ներքին անվտանգության ապահովման միջոցներ՝ ազգային արժեքների պահպանման գիտական մեթոդների մշակման ճանապարհով ներազդելով կրթության, մշակույթի և այլ ոլորտների վրա, իսկ ուղղահայաց դիտանկյունի միջոցով՝ գլոբալ հարթության վրա ծավալվող մրցակցության մեջ հետապնդում են գիտաճանաչողական, քաղաքակրթական գրավչության ապահովման և ազգային արժեքները պաշտպանելու նպատակները:

Այսպիսով, հայագիտությունը գիտության այն ոլորտն է, որը մրցակցային նոր միջավայրում՝ գլոբալացող աշխարհում, մեր՝ դեռևս ոչ միշտ ուշադիր աչքերի առջև աննկատ կերպով համադրվել է ազգային շահերի պաշտպանության առաջադրանքի հետ՝ դառնալով նրա բաղկացուցիչը, բայց միաժամանակ՝ չդադարելով լինել՝ «գիտություն իր համար»: Ուստի, հայագիտության ստանձնած նոր դերակատարության ընդհանուր ուրվագիծը պատկերացնելու համար վերջում անհրաժեշտ է հստակեցնել ու հիմնավորել նրա նպատակները՝ նոր իրողությունների համատեքստում:

3. Հայագիտության նպատակները մրցակցային նոր միջավայրում

Ավանդաբար՝ հայագիտությունն ունեցել է ընդամենը մեկ նպատակ, որն առաջին անգամ բանաձևել է մեր առաջին հայագետ Մեսրոպ Մաշտոցը՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» ձևակերպումով: Ու թեև ինչպես Սուրբ Մեսրոպի օրոք, այնպես էլ դրանից շատ դարեր անց, «հայագիտություն» հասկացությունը ասպարեզում չի եղել, բայց հայագետները, որպես պատմաբաններ, լեզվաբաններ, գրա-

[3] «Ամբողջ» և «մաս» հասկացությունները մենք դիտարկում ենք ազգային շահերի համատեքստում հայագիտության ունեցած որոշակի խնդիրների հարթության վրա՝ ամենևին էլ չժխտելով գիտության ու գիտնականի ազատությունը և հայագիտության միջոցով այլ՝ անմիջականորեն ազգային շահերի հետ կապ չունեցող խնդիրներ ուսումնասիրելու իրավունքն ու պարտականությունը:

կանագետներ և այլ հումանիտար գիտությունների ներկայացուցիչներ, շարունակել են իրենց այդ միակ՝ «ճանաչել» և «իմանալ» բառերի մեջ ամփոփվող առաքելությունը: «Հայագիտություն» հասկացությունն ստեղծվել է շատ ավելի ուշ՝ թերևս այլ ժողովուրդների ու պետությունների ճանաչողության բոլոր կողմերն ամփոփող գիտական ուղղությունների (դիսցիպլինների) նմանակումով՝ բյուզանդագիտություն, արաբագիտություն, սովետագիտություն և այլն: Բայց ինչպես վերը նշված հասկացությունները, այնպես էլ հայագիտությունը, իրենց ձևավորման պահից սկսած հանդիսացել են հարակից և մոտ, բայց այնուամենայնիվ՝ առանձին գիտությունների «փնջեր», որոնց միավորել են ոչ թե գիտական ուսումնասիրության ընդհանուր մեթոդները, այլ նրանց որոշակի առարկաները՝ օբյեկտները, տվյալ պարագայում՝ ազգերն ու պետությունները: Այսինքն՝ գիտությունների նման «փնջերի» ձևավորման հիմքում ի սկզբանե դրված են եղել ոչ միայն գիտական, այլև՝ քաղաքական խնդիրներ, ավելի որոշակի՝ սեփական ազգային շահերը պաշտպանելու, կամ էլ՝ հակառակորդին ուսումնասիրելու առաջադրանքները: Այդպես, օրինակ, քաղաքական հետաքրքրությունը Թուրքիայի և թուրքական աշխարհի հանդեպ զարկ է տվել թուրքագիտության զարգացմանը. նույնը՝ այլ ժողովուրդների ու պետությունների պարագայում: Սա վկայում է այն մասին, որ հայագիտությունը, ի սկզբանե, քողարկված ձևով, պարունակել է այն գործառութային (ֆունկցիոնալ) դերակատարության տարրերը, որոնք ամբողջովին բացահայտվում են այսօր՝ գլոբալացող աշխարհում: Ուղղակի մենք հետագայում ենք իմաստավորել հայագիտության նման դերն ու նշանակությունը: Հիշենք թեկուզ Հ.Ղևոնդ Ալիշանին, որը 19-րդ դարում հայերի համար հայտնաբերեց Հայաստանը՝ այդ բառի և՛ պատմական, և՛ աշխարհագրական առումով: Մի՞թե դա չի վկայում այն մասին, որ հայագետ Ալիշանը խոշորագույն ներդրում է կատարել ոչ միայն հայագիտության մեջ, այլև՝ ազգային շահերի պաշտպանության համատեքստում: Սակայն, ինչպես Հ.Ղևոնդ Ալիշանի ժամանակներում, այնպես էլ գրեթե ողջ 20-րդ դարում, հայագիտության ստացած որոշակի արդյունքներից հիմնականում օգտվում էին հայության հաջորդական սերունդները, մասամբ նաև՝ շատ սահմանափակ թվով օտար գիտնականներ: Իրավիճակը որոշ չափով սկսեց փոխվել մեր հարևան և մանավանդ՝ հակառակորդ երկրներում ազգային նպատակների վրա հիմնված գիտական ու քարոզչական ենթակառուցվածքների ձևավորման ժամանակներից: Թուրքիայում այդ գործընթացն սկսվեց 1930-ական թվականներին՝ Քեմալ Աթաթուրքի, իսկ Ադրբեջանում՝ 1970-ական թվականներին՝ Հեյդար Ալիևի հովանավորությամբ:

Խորհրդային Հայաստանում ազգային շահերի ամբողջական ընկալման վրա հիմնված նման հատուկ ենթակառուցվածքներ չձևավորվեցին, թեև ի պատիվ առանձին գիտնականների և գիտա-հետազոտական հիմնարկների, շատ դեպքերում հաջողվեց ճեղքել խորհրդային զսպաշապիկը՝ ինքնաբուխ (սպոնտան), չհամակարգված պատասխաններ տալով հակառակորդներին:

Փլուզվեց ԽՍՀՄ-ը, և վրա հասավ մի կողմից՝ գիտնականների ազատության, մյուս կողմից՝ «անտերության» և, վերջապես, ամենակարևորը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանը: Դրվեց այն «վիրտուալ իրականության» հիմքը, երբ ազգային շահերի ավանդական ընկալումը՝ որպես որոշակի տարածքների և շուկաների համար ընթացող պայքարի իմաստավորում, տեղափոխվում է գլոբալ մրցադաշտեր, որպես ազգերի մրցունակությունը պայմանավորող հիմնական արժեչափերի դիմակայություն կամ փոխներթափանցում՝ քաղաքականության, տնտեսության, մշակույթի, գիտության, սպորտի և այլ ոլորտներում: Նման մրցակցության պայմաններում առաջին գիծ են դուրս գալիս արժեքներ ստեղծող, արտահանող և դրանով՝ քաղաքակրթական առումով գրավիչ դարձող երկրները: Աղքատ երկրներից դեպի հարուստները կատարվող «ժողովուրդների մեծ գաղթը» սկսում է քայքայել անգամ կայացած ազգ-պետությունների էթնիկական դիմագիծը: Այս պայմաններում ձևավորվում են նաև հայկական նոր սփյուռքային իրողությունները, որոնց բնորոշ են հին ու նոր Սփյուռքների զուգահեռ գոյակցությունը և, միաժամանակ, ողջ Սփյուռքի արագընթաց ուծացումը:

Այսպիսով, ժամանակի ու տարածության, համապատասխանաբար՝ ընդարձակվելու ու սեղմվելու արդյունքում, փոխվում է միավոր ժամանակամիջոցում առաջ եկող շփումների (կոնտակտների) խտության ողջ համակարգը, որի հետևանքով՝ արդի տեղեկատվական դաշտում և նրա հզոր ազդեցությունը կրող գիտական ու քաղաքական գրականության մեջ սկիզբ է առնում հակառակորդ երկրների, մասնավորապես՝ Թուրքիայի արժեհամակարգի գլոբալ պարտադրանքը՝ Հայաստանին, հայերին ու հայագիտությանը: Արդյունքում՝ «Հայաստան» հասկացությունը կրկին ջնջվում է՝ այս անգամ որպես պատմություն, մշակույթ, քաղաքակրթություն: Մյուս կողմից էլ՝ սկիզբ է առնում հայագիտության հանդեպ կիրառվող օտար՝ ձևով գիտական, բովանդակությամբ՝ քաղաքական ռազմավարությունների (ստրատեգիաների) իսկական «արշավանք»՝ մեր պատմության, մշակույթի ու ինքնատիպ քաղաքակրթության դեմ:

Նման պայմաններում առաջ է գալիս միանգամայն տրամաբանական հարց. որո՞նք են հայագիտության նպատակները ժամանակակից աշխարհում և, ըստ այդմ՝ նրա բովանդակությունն ու սահմանումը: Որպես «գիտություն իր համար», այսինքն՝ ավանդական՝ ճանաչողական գործառույթի շարունակման ձգտում, այն չի կարող պարփակվել իր ներսում, քանզի անգա՛մ իր սեփական գործելադաշտը՝ Հայաստանի Հանրապետության տարածքը և հայ ժողովրդի ինքնաճանաչողության բնական ձգտումների բավարարման առաջադրանքը խլվում են նրանից՝ գլոբալ և տարածաշրջանային բնույթ ունեցող ագրեսիվ ռազմավարությունները՝ հայագիտությանը պարտադրվելու արդյունքում: Ուրեմն, հայագիտությանը մնում են երկու ճանապարհներ.

ա. հանձնվել այդ ռազմավարություններից որևէ մեկին, թերևս՝ ամենահզորին և կեղծել սեփական ժողովրդի պատմությունը, մշակութային ժառանգությունն ու քաղաքակրթական էությունը՝ տեղավորվելու համար տվյալ օտար ռազմավարության շրջագծում,

բ. մշակել սեփական ռազմավարությունը՝ հենվելով պետության ու ազգի աջակցության և ազգային շահերի խոր ընկալման վրա:

Ինքնին հասկանալի է, թե ո՞ւր է տանում առաջին ճանապարհը. Հակառակ պարագայում մեր նախնիները Տիզբոնից վերադառնալով Ավարայր չէին գնա: Որ երկրորդ ռազմավարությունը այլընտրանք չունի՝ դա ինքնին հասկանալի է: Բայց, այդ դեպքում կարո՞ղ է հայագիտությունը մնալ որպես «գիտություն իր համար» և նույնիսկ՝ գիտություն՝ իր ժողովրդի համար, քանզի այդ դեպքում այն կարող է գործել ներկա մրցակցային միջավայրի միայն մեկ՝ հորիզոնական հարթության վրա՝ որպես ազգային անվտանգության ապահովման միջոց: Սակայն ուղղահայաց հարթությունը հակառակորդին հանձնելու պարագայում անխուսափելի դարձող նման «շրջանաձև պաշտպանությունը» ինքնին պարտության դուռ է բացում գլոբալ աշխարհի մեկ մասնիկը դարձող հայագիտության, Հայաստանի ու հայության համար: Ուրեմն, հայագիտության՝ որպես մեր ինքնաճանաչողությունն ապահովող գիտությունների յուրահատուկ «փնջի» նպատակները ներկայումս, ինքնաճանաչողության խնդրի հետ միասին, չեն կարող չներառել ինքնակատարելագործման, այսինքն՝ նոր սերնդի հայեցի դաստիարակության և մեր հոգևոր ու նյութական մշակույթի զարգացումը խթանելու, ինքնապահպանման, այսինքն՝ մի կողմից՝ «հիշողության կորստյան» վտանգին և մյուս կողմից՝ արտաքին ներխուժմանը (ագրեսիային) դիմակայելու առաջադրանքը և, վերջապես, արտաքին աշխարհում ինքնադրսևորման, այսինքն՝ սեփական էությունը

ողջ մարդկությանը հասու դարձնելու նպատակները: Բնական է, որ այդ նպատակների իրականացումն ինքնին նշանակում է հայագիտության ավանդական գործառույթների ընդլայնում:

Հարց է առաջանում. այդ պարագայում ի՞նչ էր հայագիտությունը և ի՞նչ կարող է դառնալ՝ նոր իրողությունների համատեքստում:

Այստեղ է, որ ներկայումս մեզանում արտահայտվող հակադիր տեսակետները իրականում քողարկում են գիտության հետ հավասարապես որևէ կապ չունեցող նպատակներ՝ ակնհայտ դարձնելով նրանցում առկա «ճշմարտության պակասը (դեֆիցիտը)»: Առաջինը՝ «մաքուր գիտության» սահմանումն է՝ աչք փակելով առկա իրողությունների հանդեպ, երկրորդը՝ հայագիտության վերածումը պարզունակ գաղափարաքարոզչական զենքի՝ անտեսելով նրա ավանդական գործառույթը:

Թվում է, թե նման մոտեցումները տրամագծորեն հակասում են միմյանց: Բայց իրականում այդպես չէ, քանզի երկուսն էլ մեկնում են այն ելակետից, որ հայագիտությունը յուրահատուկ գիտությունների մի գիտություն է, ուրեմն՝ կա՛մ պետք է ծառայի ինքն իրեն (դա ներկա միջավայրում ուղղակի անհնար է), կա՛մ էլ, «ազգին ծառայելով», դադարի գիտություն լինելուց (որը նույնպես անթույլատրելի է): Իրականում, հայագիտությունը երբեք չի եղել գիտությունների գիտություն և անգամ որոշակի գիտություն՝ այդ բառի նեղ իմաստով, քանզի նաև չի ունեցել և այսօր էլ չունի միայն իրե՛ն բնորոշ ուսումնասիրության մեթոդները: Այն առանձին գիտությունների՝ պատմագրության, լեզվաբանության, հայոց հոգևոր մշակույթի ուսումնասիրության, Հայաստանի պատմական և արդի աշխարհագրության, ժողովրդագրության, պատմական բժշկագիտության, մարդաբանության, հասարակական-քաղաքական մտքի պատմության, մշակութաբանության, արվեստաբանության և հայ ժողովրդի մասին բազմաթիվ այլ գիտական ուղղությունների (դիսցիպլինների) յուրահատուկ «փունջ» է և միշտ էլ կմնա այդպիսին: Ուրեմն, կարիք չկա նման «փունջը» դարձնել գիտությունների գիտություն կամ էլ՝ մեխանիկորեն տեղափոխել ազգային շահերի գաղափարաքարոզչական ապահովման հարթություն: *Հայագիտությունը՝ հայ ժողովրդի մասին որոշակի գիտություններից բխող արդյունքների ինտեգրալ ընկալման վրա հիմնված գիտական աշխարհայացք է՝ հայոց հոգևոր և նյութական արժեքների ճանաչողության, ուսուցման, պահպանման, պաշտպանության, քարոզչության ու զարգացման վերաբերյալ:* Ուստի, նրա առջև կանգնած խնդիրների լուծումը ո՛չ նոր մակարդակ՝ գիտությունների գիտություն ստեղծելու և ո՛չ էլ հայագիտությունը՝ «ագիտպրոպի» վերածելու մեջ է, ինչով զբաղվում են նման

հակադիր տեսակետների կողմնակիցները: Լուծումը միջանկյալ օղակի ձևավորումն է, որը, գտնվելով գիտության ու քաղաքականության հատման կետում, կապահովի հայագիտության նոր նպատակների իրականացումը, այսինքն՝ նրա գիտական ու քաղաքական խնդիրների համադրության վրա հիմնված գործառութային դերակատարությունը՝ մրցակցային նոր միջավայրում[4]:

Այսպիսով, ներկա գլոբալացող աշխարհում ազգային շահերն ու հայագիտության նպատակներն այնպես են փոխադարձաբար ներթափանցել մեկը մյուսի մեջ, որ նրանցից յուրաքանչյուրի հարաբերական ինքնուրույնության հաշվառումը ամենևին էլ չի ժխտում նման փոխկապակցվածության արդյունքում առաջ եկած գործառութային կապը: Առաջինի համար՝ հայագիտությունը գիտության կարևոր բաղկացուցիչ է, իսկ երկրորդի համար՝ ազգային շահը սեփական գործառութային դերակատարության այն օբյեկտիվորեն ընդլայնված դաշտն է, որտեղ գիտական գիտելիքը ինքնաճանաչողության միջոցից վերածվում է ինքնապահպանման, ինքնավերարտադրության և ինքնադրսևորման զենքի: Առանց նման գիտելիքի ներդրման, այսինքն՝ հայագիտության գործառութային դերակատարության, տվյալ դաշտը ինքնաբերաբար հայտնվում է.

ա. օտար կրթահամակարգերի պարտադրանքի տակ,

բ. հայության համար խորթ մշակութային արժեքների ներթափանցման պայմաններում,

գ. արտաքին աշխարհում և անգա՛մ երկրի ներսում՝ Հայաստանի ու հայության մասին գիտության հետ որևէ կապ չունեցող պատկերացումների արմատավորման վտանգի տակ:

Իսկ դա նշանակում է, որ ազգային շահերի պաշտպանության համատեքստում հայագիտության գործառութային դերակատարության ժխտումը ներկայումս հավասարազոր է դառնում Հայաստանի ու հայության հանդեպ սպիտակ ցեղասպանության արդարացմանը, անկախ նրանից՝ գիտակցո՞ւմ են դա նրա հեղինակները, թե՞ ոչ:

[4] Թե ինչպես ենք պատկերացնում նման միջանկյալ օղակը և նրա միջոցով գործարկվող «հայագիտական մեքենան» իր ներքին բովանդակության և գործառութային դերակատարության առումով, կփորձենք ներկայացնել մեր ուսումնասիրության երկրորդ մասում:

Աղբյուրներ և գրականություն

1. Бенедикт Андерсон, Введение, в кн.: “Нации и национализм”, М., Праксис, 2002, с. 7.
2. Политология: Краткий энциклопедический словарь – справочник, Ростов-на-Дону, “Феникс”, Москва, “Зевс”, 1997, с. 310-311.
3. Михайловский Н. К., Что такое прогресс?, в кн.: “Сочинения Н. К. Михайловского”, том I, СПб., 1896.

Մարտի 18, 2004թ.

АРМЕНОВЕДЕНИЕ В 21-ом ВЕКЕ - ЧАСТЬ I
НАЦИОНАЛЬНЫЕ ИНТЕРЕСЫ И ЦЕЛИ АРМЕНОВЕДЕНИЯ В НОВОЙ КОНКУРЕНТНОЙ СРЕДЕ

Геворк Худинян

Резюме

В современном мире наряду с горизонтальным (геополитическим) уровнем определения национальных интересов возникает совершенно новая вертикальная конкурентная среда, где в качестве основного субъекта защиты осознанных интересов государства выступает нация – носительница определенных ценностей как в сфере экономики, так и культуры, науки и т.д. Поэтому исследование историко-культурных особенностей нации как “наука о себе” становится важнейшим средством познания и инструментом защиты национальных интересов.

Поэтому в современном мире арменоведение как область познания становится также средством самоусовершенствования, самосохранения и саморазвития нации и государства в таких сферах как образование, культура и внешняя политика. В каждой из них происходит последовательная борьба между глобальными и региональными силами за внедрение собственных представлений об Армении и армянах. Поэтому арменоведение как “наука о себе”, сохраняя свое познавательное значение, становится также

инструментом защиты национальных интересов как внутри Армении, так и на общемировом уровне.

В такой обстановке рассуждения о необходимости сохранения научной объективности или учета политической целесообразности дополняют друг друга, потому что только объективная научная оценка собственных возможностей на основе глубокого самопознания становится действенным инструментом самосохранения и саморазвития.